ԱՀ-13674

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան
«06» 10 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0182-23

Ձեռնարկողը՝ ***«Ամուր Մետալ» ՍՊԸ***
Արմավիրի մարզ, ք. Արմավիր Երևանյան փողոց 2/34

Գործունեությունը՝ ***Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Երևանյան փողոց 2/34 հասցեում ձեռնարկվող ամրաների արտադրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Արմավիրի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0182-23

< 06 **>** 10 **2023թ.**

Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Երևանյան փողոց 2/34 հասցեում ձեռնարկվող ամրանների արտադրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության

Ձեռնարկող՝	«Ամուր Մետալ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Արմավիրի մարզ, Արմավիր համայնք

Ներածական մաս. Ընկերության կողմից նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Արմավիրի մարզի, Արմավիրում քաղաքում, Երևանյան փողոց 2/34 հասցեում:

Գործարանը բնակելի թաղամասից գտնվում է մոտ 1150մ հեռավորության վրա, միջպետական նշանակության Երևան-Արմավիր (Մ5) մայրուղուց մոտ 385մ հեռավորության վրա:

Հողամասի կադաստրային ծածկագիրը՝ 04-001-0551-0015, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների: Հողամասի մակերեսը՝ 3.662304 հա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 5-րդ կետի բ. ենթակետի՝ դասակարգվում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Ընկերությունը նախատեսում է իրականացնել մետաղների ջարդոնի վերամշակում և ամրանների արտադրություն: Արտադրության կազմակերպման համար «Ամուր մետալ» ընկերությունը արտերկրից ներմուծելու է նոր ժամանակակից ձուլման և գլանման սարքավորումներ, որոնք ապահովելու են տարեկան 9600 տոննա արտադրողականություն:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմնական հումք կհանդիսանա սև մետաղների ջարդոնը, ինչն առաջանում է ինչպես կենցաղային մակարդակում, այնպես էլ տարբեր արտադրական գործընթացների արդյունքում: Սև մետաղի ջարդոնն ընդունվելու

է բնակչությունից և մեծաքանակ գնվելու է տարբեր կազմակերպություններից և մատակարարներից:

Նախատեսվում է ընդունել միայն պողպատի ջարդոն, առանց թուջի պարունակության:

Մետաղի ջարդոն հանդիսացող հումքն ավտոտրանսպորտային միջոցներով տեղափոխվելու է գործունեության համար նախատեսված տարածք և պահեստավորվելու է գործարանի տարածքում, արտադրական մասնաշենքի պահեստային մասում:

Պողպատաձուլման ընթացքում օգտագործվելու են խարամագոյացման նյութեր՝ կիր և շպատ: Մետաղի ջարդոնը սայլակներով տեղափոխվելու է հալման տեղամաս, որտեղ տեղադրվելու են 2 ինդուկցիոն վառարանները, այնուհետև տելֆերի միջոցով բեռնվելու է վառարանի հնոց: Վառարանի հնոցում ջերմաստիճանը պահպանվում է 1670^{0}C մակարդակի վրա: Մետաղի որակը վերահսկելու համար վառարանից վերցվելու է նմուշ և ստուգվելու է լաբորատորիայում:

Նախատեսվում է ապահովել ՌԴ ԳՈՍՏ-երին համապատասխանմետաղի որակ:

Հալվածքը վառարանից հոսում է դեպի հալվածքի տեղափոխման վագ (լոտոկ), որը նախապես տաքացվում է մինչև 1200^{0}C և լցվում ձուլման սարքի մեջ: Ձուլման սարքի ելքն ունի հատուկ կտրվածք, որի շնորհիվ ձևավորվում են տարբեր տրամաչափերի ամրաններ:

Մետաղի հալման և ամրանների արտադրության համար ընկերությունը նախատեսվում տեղադրել.

- ինդուկցիոն վառարաններ՝ 2 հատ
- հալվածքի տաքացման գազային վառարան՝ 1 հատ,
- ամրանների ձևավորման հոսքագիծ՝ 1 հատ:

Նախատեսվում է տեղադրել ժամանակակից արտադրության, նվազագույնը 90 տոկոս մաքրման արդյունավետություն ապահովող գազամաքրման համակարգ: Համակարգը կներառնի ցիկլոններ, խողովակաշար, օդամղիչ, արտանետման խողովակ:

Ընդամենը գործարանում նախատեսված է ընդունել ձուլել և վերամշակել /հալում, ձուլում/ 9600տ մետաղի ջարդոն:

Հալված մետաղի հետագա վերամշակման՝ ձուլման և գլոցման ժամանակ, շերեփների ջերմային նախապատրաստման համար օգտագործվում է բնական գազ, ինչի այրման ընթացքում առաջանում են ազոտի և ածխածնի օքսիդների արտանետումներ:

Ըստ նախագծի տարեկան գազի ծախսը կկազմի՝ 800.000 - 1.000.000 մ^3/տարի:

Հալման վառարանները կահավորված են գազաօդային խառնուրդի կլանման վահաններով (զոնտեր,) արտազատման խողովակներով, որոնք միացված են ցիկլոններին, որոնք իրենց հերթին միացված են գազամաքրման համակարգին: Ցիկլոններում կենտրոնախույզ ուժի ազդեցությամբ պինդ մասնիկները իջնում են ցիկլոնների ստորին մաս, որտեղից լցվում են բունկերի մեջ:

Արտանետումների ազդեցությունը գնահատելու նպատակով կատարվել են մթնոլորտում դրանց ցրման հաշվարկ և արդյունքները համեմատվել են սանիտարական նորմերի հետ:

Մթնոլորտում վնասակար արտանետումների ցրման հաշվարկները կատարվել են համակարգչի վրա, «Էռա» ծրագրով:

Ըստ այդ հաշվարկների աղտոտվածության առավելագույն մակարդակը բոլոր նյութերի համար գտնվում է թույլատրելի նորմերի սահմաններում:

Ըստ 245-71 սանիտարական նորմերի «Ամուր մետալ» ՍՊԸ ամրանների գործարանի

սանիտարապաշտպանիչ գոտին առավելագույնը կկազմի 500մ: Բոլոր դեպքերում պահպանվում է արտանետման աղբյուրից 1150մ հեռավորությունը մոտակա բնակելի տներից:

Ամրանների գործարանում օգտագործվելու է ջուր՝ վառարանի հովացման, ինչպես նաև անձնակազմի խմելու կենցաղային կարիքների համար:

Ջուրն օգտագործվելու է հալման, ձուլման սարքավորումների հովացման համար: Հովացումն իրականացվելու է շրջանառու եղանակով: Հովացման ջուրն անցնելով վառարանների շապիկներով, չշփվելով մետաղների հետ, հոսում է պարզարան, որտեղ նստեցվում են մեխանիկական մասնիկները, որից հետո պոմպերով մղվում է մետաղի հովացման համակարգ: Համակարգում տեղի է ունենում բնական գոլորշիացում, որի արդյունքում ջրի ծավալը պակասում է: Շրջանառու համակարգի ծավալը կազմում է 120մ^3: Բնական գոլորշիացման արդյունքում ջրի կորուստը կազմում է 10% օրական, որը լրացվում է թարմ ջրով: Այսպիսով թարմ ջրի օրական պահանջը կկազմի՝ 12մ3/օր,

Նախատեսվող գործունեության արդյունքում արտադրական արտահոսք չի առաջանում: Հովացման ջրօգտագործումը համարվում է անվերադարձ:

Տարածքում և մերձակայքում կոյուղու համակարգ չկա: Նախատեսվում է վերանորոգել գործարանի տարածքում առկա կեղտաջրերի հավաքման հորը, ապահովելով անթափանց հատակի և պատերի անթափանցությունը: Հորի պարունակությունը պարբերաբար կտեղափոխվի մոտակա կոյուղու համակարգ:

Ամրանների գործարանում աղմուկի աղբյուր են հադիսանում օդամղիչը, տրանսպորտային միջոցները և արտադրական մասնաշենքում տեղադրված սարքավորումները:

Հիմնական աղմուկի աղբյուր է հանդիսանում օդամղիչը որի աղմուկի մակարդակը չի գերազանցի 60 դԲա: Համապատասխանաբար չեն գերազանցվի սահմանային մակարդակները ոչ աշխատանքային տեղերի՝ 80 դԲա, ոչ էլ բնակելի տարածքների՝ ցերեկային ժամերի համար 55 դԲա:

Գործարանի շահագործման արդյունքում կառաջանան հետևյալ արտադրական թափոնները.

Էլեկտրավառարանների խարամը, որը պարունակում է երկաթի օքսիդներ, տրամադրվում է ցեմենտի գործարաններին՝ բովախառնուրդի պատրաստման համար: Հաշվարկային քանակը՝ 480 տ/տարի:

Գազամաքրման համակարգում հավաքված փոշի, /թափոնատեսակի դասիչ՝ 3130120001013/, 75.6տ/տարի քանակով: Փոշին ներկացված է որպես վտանգավորության երրորդ դասի թափոն և ենթակրվելով մինչև 1700^{0}C ջերմային մշակման, չի կարող որևէ վտանգ ներկայացնել շրջակա միջավայրի համար: Բոլոր տեսակի թափոններ հավաքումը, ժամանակավոր պահեստավորումը և հետագա վաճառքը կիրականացվի լիցենզավորված կազմակերպություններին:

Կազմակերպությունների տարածքում առաջացած 9.6 մ^3/տարի կամ 3.8տ հաշվարկային քանակով կենցաղային չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի) /դասիչ՝ 9120040001 00 4/, կոմունալ ծառայության միջոցով կտեղափոխվի քաղաքային աղբավայր:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

Արտադրական գործընթացում օդային ավազանն աղտոտումից պահպանելու համար

նախատեսված են՝

- արտադրական մասնաշենքը ապահովել բնական և արհեստական օդափոխության համակարգերով:
- Հալման վառարանները կահավորել օդաքարշ համակարգով:
- Բոլոր արտանետումներն ուղղորդել մեկ խողովակում, այնուհետև մաքրել գազամաքրման համակարգում:
- Իրականացնել արտանետումների մոնիթորինգ:
- Հովացման գործընթացը կազմակերպել ջրի շրջանառու համակարգի միջոցով:
- Արտադրական տարածքում հնարավոր արտահոսքերը/որոնք կարող են առաջանալ անձրևաջրերից/ հավաքել ավազաններում, այնուհետև հեռացնել հարևանությամբ անցնող հեղեղատար:
- Վթարային և հակահրդեհային իրավիճակների համար նախատեսել ջրի պահուստային տարողություններ:
- Նախատեսվում է տարածքի 20 տոկոսի՝ 7325մ², կանաչապատում: Կանաչապատումը նախատեսվում է վարչական շինության շրջակայքում, ինչպես նաև արտադրական տարածքի եզրերով: Կանաչ տարածքը բաղկացած կլինի սիզամարգով, տեղական կլիմայական պայմաններին բնորոշ պտղատու և դեկորատիվ ծառատեսակներով:

-Մետաղի պահեստավորումն իրականացնել հատուկ հատկացված պահեստային տարածքներում:

- Թափոնների հետ աշխատելիս հետևել, որպեսզի անձնակազմը կրի հատուկ անհատական պաշտպանիչ միջոցներ՝ ձեռնոցներ, դիմակներ և արտահագուստ:

-Վառարանները սպասարկող անձնակազմի համար ապահովել բոլոր անհրաժեշտ անհատական պաշտպանության միջոցները:

-Կահավորել հալման և ձուլման տեղամասերն անվտանգության նշաններով և ցուցադրական վահանակներով:

-Ձուլարանի արտադրական հանգույցում ապահովել հրդեհային անվտանգության պարագաների առկայությունը /կրակմարիչներ, բահեր և այլն/, ինչպես նաև 2 հակահրդեհային ջրի բաքեր, յուրաքանչյուրը 10մ³ ծավալով: Բաքերը կմիացվեն հատուկ պոմպի ներծծման խողովակին և հրդեհային իրավիճակներում պոմպը կմիանա և ջուր կմատակարարի հրդեհի տեղամաս.

-Կազմակերպել գործարանի տարածքում անձնակազմի առաջին օգնության և բուժսպասարկման կետ:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսված ծախսերը կկազմեն՝ 1290000.0 դրամ:

Պատճառաբանական մաս. Արմավիրի մարզի Արմավիր համայնքի համայնքապետարանում, օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ներքին գործերի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, ինչպես նաև Արմավիրի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական

ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:
-Արտադրությունում գտնվող հրդեհավտանգ հանգույցները պետք է համալրված լինեն հակահրդեհային ավտոմատ սարքերով, որոնք կվերահսկեն դրա տարածքրում հրդեհի բռնկումը:
-Բոլոր այն էլեկտրական սարքավորումները, որոնք չունեն ավտոմատ սարքեր, պետք է ապահովված լինեն ձեռքի կրակմարիչներով:
- Բոլոր տեսակի թափոններն անհրաժեշտ է հավաքել և ժամանակավոր պահեստավորել, կամ տրամադրել այլ լիցենզավորված կազմակերպություններին:
-Ձուլարանի արտադրական հանգույցում անհրաժեշտ է ապահովել հրդեհային անվտանգության պարագաների առկայությունը /կրակմարիչներ, բահեր և այլն/:
- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ամուր Մետալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Երևանյան փողոց 2/34 հասցեում ձեռնարկվող ամրանների արտադրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ Հովիկ Մեսրոպյան